№ 115 ՏՈՒԲԱՆԱԹԵՐԹ ՏԱՐԻ Հարեւաբերի, 11 Յուլիսի 1901 Հարեւ.-ում՝ 11 Յուլիսի ՏՈՒԲԱՆԱԹԵՐԹ ՏԱՐԻ № 115

ՀԱՅԿԱԿԱՆ

Հրատարակվում է ամեն օր (բացի մուտ օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յուլիսից մինչև ամսի վերջը՝ 1 ր., հասով 5 կ.։
Բաժանորդագրվում են գրասեղանի վրա գտնվող բյուրոյում։
Տպագրվում է Տիֆլիսում, Redaction „Nor-Dar“ կամ Tiflis, Թիֆլիսի հայոց „Հոր-Ձար“ Տպարանում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱՏՈՒՆ

Հեռախոս № 37

ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներքին լուրեր։

Ռուսաստան։—Նոր հրամաններ։—Ռուսական բանակի վերակազմություն։—Ռուսական ֆինանսական դրությունը։—Ռուսական նոր հարկեր։—Ռուսական նոր պետական պարտք

բենց հայրենակիցներին Օրանժի հասարակապետութեան մէջ նրանց ներս խուժած ժամանակ։ Նրանցից մի քանի հարիւր հոգի բոլորովին փախան և անցան բոէբնների կողմը, տանելով իրենց հետ ղէնքերն ու իրեղէնները։ Բայէն-Պոուէլի ահա այս անհետաւոտութիւնն էր գլխաւոր պատճառը, որ նա յետս կոչուեց Հարաւային Աֆրիկայից։

—Կրիւգերին չրջապատողների չրջանից «Daily News»-ին հաղորդում են, որ բոէր կառավարութեան ներքայում գտնուած անպամները շատ լաւ տեղեակ են այն ամենին, ինչ որ կատարւում է Հարաւային Աֆրիկայում, որովհետև հարաւային ներոպայի մի քաղաքի և արեւելեան-աֆրիկեան նաւահանգիստներից մէկի միջև շարունակ հեռագրական հաղորդակցութիւն է լինում։

—

ՉԻՆԱՍՏԱՆ

«Köln. Zeit.»-ի Պեկինի թղթակիցը մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում բոքսրների չարժման պարագլուխների պատիժների մասին։ Ներոպական զօրքերի հրամանատարների հսկողութեան տակ Պեկինում մահուան պատժի են ենթարկուած Զանդ Իւխսիէնի նահանգապետը և երկու մինիստր՝ Չինսիու և Խսիչենգ։ Յետոյ երեք մանդարին Չաուչուչիաու, Ինգնիեն և պրինց Չվանդ դատապարտուած էին ինքնասպանութեան, իսկ պրինց Թուանն արտաքսուած է արևմտեան Թուրքստան։ Արդարադատութեան մինիստրութեան նախկին նախագահ Չաուչուչիաու աջակցութիւն էր գտել Խսինանֆուի բըռնակչութեան մէջ, որը դիմել էր կառավարութեանը, խնդրելով որ ներումն չընորհուի նրան, բայց նրա մահուան պատիժը փոխուած էր միայն ինքնասպանութեան, և Չաուչուչիաուն ինքնասպանութիւն գործեց կուլ տալով բաւական քանակութեամբ ոսկեզօծ թուղթ և դրանով խեղդուելով. ինքնասպանութեան այս եղանակն ամենից աւելի ազնիւ է համարւում Չինաստանում։ Պրինց Չվանգ իրեն կախեց տեղական տաճարի մէջ իրեն ուղարկուած մետաքսեայ սպիտակ պարանով, իսկ գլաքննական տեանի Նախագահ Ռունգնիենն ինքն իրեն խեղդամահ արեց, բերանը լցնելով հողով։ Պէտք է նկատել, որ հոգեփոխութեան կողմնակիցները միշտ խուսափում են այնպիսի անձնասպանութիւններից, որոնց ժամանակ մարմնի այս կամ այն մասը վնասւում փչանում է, ուստի Չինաստանում նախապատիւ են համարում իրենք իրենց կախել, չրահեղձ անել, թունաւորել և խեղդել։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կիւչենները հաղորդում է, որ Նախագահ Ջոայնի իրեղէնների մէջ գտնուած է ենթ-քարտուղար Ռէյցի մի նամակը, որի մէջ վերջինս հաղորդում է Նախագահին, թէ Տրանսվալի կառավարութիւնը Բոխայի, Վիլսոնի և Սմուտսի հետ միասին խորհրդակցութիւն էր ունեցել, որի ժամանակ յայտարարուած էր, թէ բազմաթիւ բոէրները անձնատուր են եղել, ռազմամերքն և կենսական մթերքները վերջանում են, Տրանսվալի կառավարութիւնը կազմալուծւում է և ներոպական բարդութիւնների հնարաւորութիւն չի նախատեսւում, ուստի Տրանսվալի կառավարութիւնը վճռել է թոյլատուութիւն խնդրել պնդ ադեսպանները ուղարկելու Կրիւգերի մ.ա, որ բացայայտեն նրան երկրի սարսափելի վիճակը։ Իսկ եթէ այդ խնդիրքը մերժուի, Ռէյցն առաջարկում է ժամանակաւոր հաշտութիւն խնդրել, որպէս զի լսուի երկու հասարակապետութիւնների կարծիքը։ Ջոայնի պատասխանը կրում է մայիս 2 թիւը, և նրա մէջ ասուած է, թէ ենթ-քարտուղարի նամակը մի ծանր հարուած էր նախագահի համար։ Նա յայտարարում է, թէ չի ուզում դիմել ծայրայեղութեան։ Ռազմամերքը շատ քիչ է մնացել, բայց և այնպէս մի քիչ կայ դեռ նա։ «Ինչ պատճառ կարող է արգելել այսուհետև ևս Աստծու վրայ յուսալու»—հարցնում է նա։ «Ես հաստատ համոզուած եմ, որ մի քանի ամսուայ ընթացքում բարդութիւններ կը ծագեն, որոնք կօգնեն մեզ հասնելու բարօրութեան։ Մեր պատգամաւորութեան ներոպայում գտնուիլը ցոյց է տալիս, որ մեր գործն անյուսալի չէ»։ Նախագահը Ռէյցին խնդրում է սպասել, մինչև որ ինքը խորհրդակցի Դևետի հետ։

—Լսւում է, որ Դևետն իւր փոքրաթիւ կողմնակիցներով գտնւում է Ռէյցի հարաւ-արևմտեան կողմը։—Միդլբուրգից (Կապի գաղութ) հաղորդում են, որ Կիչենները ներում է չնորհել մահուան դատապարտուած 34 գերիների, մահուան պատիժը փոխարինելով ցմահ տաժանակիր աշխատանքների, որոնց պիտի ենթարկուեն նրանք Բեմուդի կղզիներում։ — Կապչտադի լրագրներն անդադար գանգատւում են Կապչտադում ոճիրների ու բռնութիւնների բազմանալուց և ոստիկանական միջոցների անբաւարար լինելուց։ Ոճրագործների թիւն աւելանում է կասկածելի բնաւորութեան աէր մարդկանցով, որոնք Կապչտադ են գալիս աշխարհի ամեն ծայրերից։

—Յուլիսի 8 ին Պրետորիայում թոքերի բորբոքումից վախճանուեց նախագահ Կրիւգերի կինը, ընդամենը երեք օր հիւանդ լինելուց յետոյ։

—Կիաշենները հաղորդում է Պրետորիայից, որ մայօր Մուրի հրամանատարութեան տակ գտնուած անգլիական մի փոքրիկ զօրախումբ Չիմատաուլի մօտ մի ամբողջ օր յարձակման ենթարկւում էր թնդով գերազանց թշնամու կողմից փուշի հրամանատարութեամբ, բայց անջող։ Անգլիացիներից եօթ հոգի սպանուած են, երեք սպայ և 17 զինուոր վիրաւորուած։ Խարտըն Ալիւալնորտից ճանապարհ է ընկել օգնութեան հասնելու, թէև օգնութիւն չեն խնդրել։

—Պեկինի դեսպանները պաշտօնապէս սլոշել են պահանջել, որ Չինաստանը տուգանքի գումարը վճարի 4% օրլիգացիաներով։ Ծարզ այս մասին գոյութիւն ունէը միայն մի հասարակ համաձայնութիւն։—Ոսաիկանական ծառայութիւնը Պեկինում յանձնուած է չինացիներին, քաղաքը կատարելապէս անդորը է։ Այս ամիսը լրանալուց առաջ օտարերկրեայ զօրքերը կըհեռացնուեն այնտեղից, բացի դեսպանատների և երկաթուղու պահպան զօրախմբերից։

—Լոնդոնում կայացած բանկետում ազատամիտ Ասկվիտ ասաց. «Հարաւային Աֆրիկան պէտք է դառնայ երկրորդ Քանադա։ Ազատամիտները պէտք է ընդունեն իմպերիալիզմը, որ նրանց կուսակցութիւնը դառնայ ազգային և ժողովուրդը կարողանայ իւր վճռակը յանձնել նրանց ձեռքը»։

—Բելգրադում պաշտօնապէս հաղորդում է, որ բնակիչները բոլորովին դադարել են Գոլաշկինից։ Կատարելապէս անպաշտպան բնակչութիւնը փախել է լեռները։ Ալբանացիները ոմն Իսա Բոլետինցի առաջնորդութեամբ յարձակուել են սերբերի վրայ ինչպէս միտրովիցում, այնպէս և նրա շրջակայքում։ Բազմաթիւ սերբեր ենթարկուել են բռնութիւնների և վիրաւորուել։

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿՈՍՏԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(1901 թ. մայիսի 6-ից)

Ժամերը նշանակում են Պետերբուրգի ժամանակը, փակագծերի մէջ—Թիֆլիսի ժամանակը

Արագընթաց գնացքը № 2 Թիֆլիսից Բագու մեկնում է (չաբաթը մի անգամ, հինգշաբթի օրերը) 9 ժ. 17 ր. (10 ժ. 15 ր.) առ., հասնում է Բագու 10 ժ. 40 ր. (11 ժամ 38 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է հինգշաբթի օրերը 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.) առ., Թիֆլիս հասնում է 7 ժ. 25 ր. (8 ժ. 23 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 1 Թիֆլիսից Բաթում մեկնում է 9 ժ. 11 ր. (10 ժ. 9 ր.) առ., հասնում է Բաթում 7 ժ. 58 ր. (8 ժ. 56 ր.) եր.։

Արագընթաց գնացքը № 2 Բաթումից Թիֆլիս մեկնում է 9 ժ. 45 ր. (10 ժ. 43 ր.) եր., հասնում է Թիֆլիս 7 ժ. 57 ր (8 ժ. 55 ր.) առ.։

Պոստային գնացքը № 3 Բագուից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 15 ր. (11 ժ. 13 ր.) եր., Թիֆլիս հասնում է 4 ժ. 13 ր. (5 ժ. 11 ր.) ցերեկուայ. Թիֆլիսից Բաթում մեկնում է 5 ժ. 27 ր. (6 ժ. 25 ր) եր., Բաթում հասնում է 6 ժ. 30 ր. (7 ժ. 28 ր.) առ.։

Մարդատար գնացքը № 5 Բագուից Թիֆլիս մեկնում է 12 ժ. 27 ր. (1 ժ. 25 ր) ցերեկուայ, Թիֆլիս հասնում է 5 ժ. 51 ր. (6 ժ. 49 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բաթում մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր) առ. Բաթում հասնում է 6 ժ. 48 ր. (7 ժ. 46 ր.) եր.։

Պոստային գնացքը № 4 Բաթումից Թիֆլիս մեկնում է 10 ժ. 17 ր (11 ժ. 15 ր.) եր., Թիֆլիս է հասնում 10 ժ. 40 ր. (11 ժ. 38 ր.) առաւօտեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 11 ժ. 48 ր. (12 ժ. 46 ր.) ցերեկուայ, հասնում է Բագու 5 ժ. 40 ր (6 ժ. 38 ր) առ.։

Մարդատար գնացքը № 6 Բաթումից Թիֆլիս մեկնում է 8 ժ. 15 ր. (9 ժ. 13 ր.)առ., հասնում է Թիֆլիս 7 ժ. 38 ր. (8 ժ. 36 ր.) երեկոյեան. Թիֆլիսից Բագու մեկնում է 8 ժ. 18 ր. (9 ժ. 16 ր.) եր., Բագու հասնում է 12 ժ. 40 ր. (1 ժ. 38 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Թիֆլիսից Կարս մեկնում է 10 ժ. (10 ժ. 58 ր.) եր., հասնում է Սանահին 2 ժ. 56 ր. (3 ժ. 54 ր.), Ղարաքիլիսա—5 ժ. 4 ր (6 ժ. 2 ր.) առ., Ալէքսանդրապոլ—8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.) առ., Կարս—12 ժ. 23 ր. (1 ժ. 21 ր.) ցերեկուայ։

Պոստային գնացքը Կարսից Թիֆլիս մեկնում է 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.) ցերեկուայ, հասնում է Ալէքսանդրապոլ 7 ժ 40 ր. (8 ժ. 38 ր.) եր., Ղարաքիլիսա—11 ժ. (11 ժ. 58 ր.) գիշերուայ, Սանահին—1 ժ. 15 ր. (2 ժ. 13 ր.) գիշ., Թիֆլիս—6 ժ. 15 ր. (7 ժ. 13 ր.) առ.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Թիֆլիսից Ղարաքիլիսա մեկնում է 8 ժ. 10 ր. (9 ժ. 8 ր.) առ., հասնում է Սանահին 3 ժ. 55 ր. (4 ժ. 53 ր.), Ղարաքիլիսա—7 ժ. 28 ր. (8 ժ. 26 ր.) եր.։

Ապրանքատար-մարդատար գնացքը Ղարաքիլիսայից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 ր.) առ., հասնում է Սանահին 8 ժ. 57 ր. (9 ժ. 55 ր.) առ., Թիֆլիս—6 ժ. 05 ր. (7 ժ. 03 ր.) եր.։

Թիֆլիս-Բորժոմ

Մարդատար գնացքը № 7 Թիֆլիսից Բորժոմ մեկնում է 1 ժ. 40 ր. (2 ժ. 38 ր.) ցերեկուայ, հասնում է Մցխէթ 2 ժ. 16 ր. (3 ժ. 14 ր.) Գորի—3 ժ. 37 ր. (4 ժ. 45 ր.), Միխայլովո—4 ժ. 59 ր. (5 ժ. 57 ր.), Բորժոմ—6 ժ. 40 ր. (7 ժ. 38 ր.) եր.։

Մարդատար գնացքը № 8 Բորժոմից Թիֆլիս մեկնում է 1 ժ. 5 ր. (2 ժ. 3 ր) գիշ., հասնում է Միխայլովո 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.). Գորի—4 ժ 29 ր. (5 ժ. 27 ր.), Մցխէթա—6 ժ. 2 ր. (7 ժ.), Թիֆլիս—6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) առ.։

Մցխէթա-Թիֆլիս

Ամարային գնացքը № 18 Մցխէթայից Թիֆլիս մեկնում է 5 ժ. 22 ր. (6 ժ. 20 ր.) եր., հասնում է Թիֆլիս 6 ժ. 01 ր. (6 ժ. 59 ր.) եր.։

Միխայլովո-Թիֆլիս

Ամարային գնացքը № 20 Միխայլովոյից Թիֆլիս մեկնում է 6 ժ. 49 ր. (7 ժ. 47 ր.) եր., հասնում է Գորի 7 ժ. 55 ր. (8 ժ. 53 ր.), Մցխէթ—9 ժ. 31 ր. (10 ժ. 29 ր.), Թիֆլիս—10 ժ. 14 ր. (11 ժ. 12 ր.) եր.։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

КАПИЛЛЕРИНЪ
НОВОЕ СОВЕРШЕННО БЕЗВРЕДНОЕ СРЕДСТВО
ВОЗВРАЩАЕТЪ СѢДЫМЪ ВОЛОСАМЪ
ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ
ЦѢНА 2 РУБ.
А. СІУ и К°
(М.)№ 116818 26 – 22



ՀԱՍԿԱՑԷՔ ինչումն է կայանում օգոլի կատարելագոյն ինքնուրոյն ներգործութեան ահագին գերազանցութիւնը, բերանն ու ատամները մաքրելու համար գործադրուող միւս բոլոր գիղերը կարող են ներգործել միայն այն քիչ րոպէների ընթացքում, որոնց ժամանակ կատարւում է բերանը մաքրելու գործողութիւնը, իսկ օդոլը չի դադարում հականեխական ազդեցութիւն ունենալ մաքրելուց յետոյ գոլեմ մի քանի ժամ։ Օդոլը ներս է ծծւում խոռոչուռը ատամները և ընդերքի լորձունաթաղանթները և, մի տեսակ յագեցնելով նրանց, թողնում է այնտեղ հականեխական նիւթերի մի պաշար, որ անընդհատ ներգործում է շատ ժամերի ընթացքում։ Այս նշանաւոր յատկութեան չնորհիւ օդոլն ընդունակութիւն ունի ախտահանելու բերանն անպայման և, այս հանգամանքի չնորհիւ, պահպանելու ատամները։
1/4 սրուակը, որ բաւական է մի քանի ամիս, արժէ 1 ր. 50 կ.։ (М.) 301.

Լաւ տիրապետած լիդիերով ՀԱՅՈՑ ԳՐԱԲՈՐ ԵՒ ԱԶԽԱՐՀԱԲՈՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՆ և երկար տարիներ հմտանալով գրագրութեան պաշտօնի մէջ, ցանկանում եմ վարել այդ պաշտօնն հոգևոր վարչութեան ատենատեղերում և կամ պաշտօնական անձերի մօտ։
Ծանկացողները թող առաջարկեն իրենց պայմանները ինձ. Ахалкалаки, Оганесу Айрапетянцу.
(0) 5—5

ՆՊԱՍՏՈՒՄ Է ՄԱՐՄՈՂՈՒԹԵԱՆԸ
ԸՆԴՂԱՆՊԱՀԱԿԱՆ ՄԻՋՈՑ
ԳԱՒՄՄԻ-ՊԵՊՍԻՆ
Pemmi Gupsin
ԴԵՂԱԳՈՐԾ Ի. ՊՕՂՈՍՍԿՈՒ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Համեղ կենդաբար կոնֆետներ, մերենաբար աքրում են ատամները, հականեխում և հաճելի հոտ են տալիս բերանի խոշչին և ընդերքին։ Գաւմմի-Պեպսինը գործածելիս նուազում է ծխախոտ ծխելու ցանկութիւնը։ Իւրաքանչիւր շերտկոնֆետ պարունակում է ամենալաւ Պեպսին և «Գաւմմի», որը հաճելի է և անվերջ ծամւում է։
ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.
Վաճառւում է դեղատներում և դեղատնային խանութներում
Պահեստը՝ СПБ. Вас. Остр., 4 лин., д. 39.
Վաճառւում է՝ Южно Русское О-во апт. тов. և ուրիշների մօտ։ (М.) 35710 16—11

ТРЕБУЙТЕ ВЕЗДЪ
ШОКОЛАДЪ СІУ
ФАБР. С. СІУ и К° МОСКВА.
(М ,90634 52 – 52

ԲՐՈԿԱՐ ԵԻ Ը՚ՆԿ.
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է
Ստամբ Հականեխական էլէքսիր
„ՍԱԼՈԼ“
(М.) 95174. Սրուակը 75 կոպ. 10—1

Доз. цензурою Гифлисъ, 1901 г іюля 10-го дня Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ № 387